ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄԱՊՁԲ-23-9/5-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 15.12.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դիլանյանի, ով գործում է «Ինտերմեդ Գրուպ» ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 27.11.2023թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-23-9/5-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելվածներ № 1-ի և №2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 985,800 (ինը հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 25.12.2023թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի № 1 և №2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք.Երևան, Ռուբինյանց 27/55 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 1930048363450100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02621803 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ա. ԴԻԼԱՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ-23-9/5-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չ/հ | CPV կոդը | CPV անվանումը | անվանումը | Չ/Մ | Քանակ | միավորի գինը (ՀՀ դրամ) | գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը՝ 2023թ., 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2023թ.-ը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 62 | 33141121/562 | Վիրաբուժական թելեր | Թել վիրաբուժական | հատ | 300 | 1493 | 447,900 | 300 |
| 63 | 33141121/563 | Վիրաբուժական թելեր | Թել վիրաբուժական | հատ | 300 | 1793 | 537,900 | 300 |

Հավելված N 2
N ԲՄԱՊՁԲ-23-9/5-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | |
|---|---|---|---|---|
| հ /հ | CPV կոդը | CPV անվանումը | անվանումը | վճարումը նախատեսվում է իրականացնել 2023թ., համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 25.12.2023թ. |
| 1 | 33141121/562 | Վիրաբուժական թելեր | Թել վիրաբուժական | 447,900 |
| 2 | 33141121/563 | Վիրաբուժական թելեր | Թել վիրաբուժական | 537,900 |
| Ընդամենը | | | | 985,800 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ տնօրեն

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ